Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2015թ. հունիս ամսվա ընթացքում պետության համար պարտավորություններ չառաջացնող գործարքների՝ ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանով հաստատված «Պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների ընտրանքային գնահատման» կարգով սահմանված հրավերների ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ

Պատվիրատուի անվանումը և գնման գործարքի ծածկագիրը	**Եզրակացություն (դրական կամ բացասական)**	**Բացասական եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ պատվիրատուներից ստացված պարզաբանումներ**	**Պատվիրատուներից ստացված պարզաբանումներն ընդունելու կամ չընդունելու մասին Կենտրոնի եզրակացություն**
ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնք *«ՀՀ ԳՄՆԳ-ԲԸԱՇՁԲ-01/15»*	Հրավերի ծավալաթերթ-նախահաշվում բացակայում են աշխատանքների կատարման արժեքները, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 37-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին: Հրավերով սահմանված չեն աշխատանքների կատարման ժամկետները, ինչը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:	Պատվիրատուն պարզաբանում չի ներկայացրել:	
«Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ *«ՈՀՀ–ԲԸԱՇՁԲ-*	Հրավերում չի ներառվել ոչ ռեզիդենտ կամ ֆիզիկական անձ հանդիսանալու դեպքում Կարգի 67-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հայտարարության ներկայացման պահանջի՝ հայտարարության ձևին	«ՈՀՀ –ԲԸԱՇՁԲ-05/15» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է	

05/15»	համապատասխան հավելվածը: Հրավերի՝ • «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման կարգով համանման են սահմանվել «110-220 կիլովոլտ լարման հզորության ուժային տրանսֆորմատորների նորոգման» աշխատանքների կատարումը, ինչը չի համապատասխանում Կարգի 69-րդ կետի պահանջներին, • «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման համար մասնակիցներին ներկայացվող պահանջները (բացառությամբ Կարգի 66-րդ և 68-րդ կետերի 1-ին ենթակետերով պահանջվող հայտարարությունների), ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, սահմանվում են, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ (Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերություն):	չկայացած:	
ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի գյուղապետարան *«ԼՄԼԳ-ՊԸԱՇՁԲ-15/1»*	Հրավերի «Մասնագիտական փորձառություն» և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերում միաժամանակ ներառվել են Կարգի 65-րդ և 67-րդ կետերի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ	Պատվիրատուն պարզաբանում չի ներկայացրել:	

	դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով:		
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի Ալ. Մյասնիկյանի անվան N1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ *«ՀՀ ԳՄԴ1 ՊԸԱՇՁԲ-15/01»*	Հրավերի 1-ին մասում ներառվել են 8.1.1-8.1.3 կետերը, որոնք պարունակում են ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու կամ չշտկելու մասին Կարգի համապատասխանաբար՝ 51-րդ և 52-րդ կետերով սահմանված պահանջները, այնինչ Կարգի 50-րդ կետի համաձայն, անհրաժեշտ էր հրավերում ներառել միայն 8.1.4 կետը: Հրավերով ներկայացված ծավալաթերթում հղումներ են կատարվել ծագման երկրին (նշված է՝ «արտերկրյա»), ինչը չի համապատասխանում Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին:	Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընթացակարգը հայտարարվել է չկայացած:	
ՀՀ Արարատի մարզի Ազատավան համայնք *«ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-15/1»*	Հայտարարությամբ սահմանված հայտերի բացման օրը չի համընկնում հրավերով և www.gnumner.am կայքում (այսուհետ՝ Կայք) ներկայացված հայտարարության և հրավերի արդիականության վերջնաժամկետներին: Հրավերի՝ • «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման կարգում միաժամանակ ներառվել են Կարգի 65-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ	Պատվիրատուն պարզաբանում չի ներկայացրել:	

	անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով: • «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման կարգը չի համապատասխանում Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջներին: • ծավալաթերթ-նախահաշիվը չի պարունակում աշխատանքների կատարման արժեքները, ինչը չի համապատասխանում Կարգի 37-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին:		
Մեծավանի «Զանգակ» ՆՈՒՀ ՀՈԱԿ *«ՀՈԱԿ-ՊԸԱՊՁԲ-15/01»*	Հայտարարությամբ և հրավերով սահմանված գնման առարկան ներառված է շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում, սակայն որպես գնման ձև ընտրվել է պարզեցված ընթացակարգն, ինչը չի համապատասխանում Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով և Կարգի 25-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջներին:	Պատվիրատուն պարզաբանում չի ներկայացրել:	
ՀՀ Արարատի մարզի Այգեստան համայնք *«ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-15/1»*	Հայտերի ներկայացման համար սահմանված վերջնաժամկետը՝ 29.06.2015թ. չի համապատասխանում Կարգի 86-րդ կետով սահմանված պահանջներին: Հրավերի՝ • «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման կարգում միաժամանակ ներառվել են Կարգի 65-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող	Ընթացակարգը հայտարարվել է չկայացած:	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն և պատվիրատուին ուղարկվել է ներկայացված պարզաբանումը,ինչպես

	պահանջների հստակեցման նպատակով: • «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման կարգը չի համապատասխանում Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջներին: • ծավալաթերթ-նախահաշիվը չի պարունակում աշխատանքների կատարման արժեքները, ինչը չի համապատասխանում Կարգի 37-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին:		նաև Կենտրոնի եզրակացությունը:
ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքապետարան *«ՀՀ-ՏՄԴՔ-ՊԸԱՇՁԲ-15/10»*	Հրավերի 1-ին մասի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման կարգով սահմանվել են Կարգի 67-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պահանջները, մինչդեռ հրավերի 2-րդ մասի 2.2.5 ենթակետում ներառվել են նաև Կարգի 67-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, ինչն անհամապատասխանություն է առաջացնում:	Սահմանված կարգով անհամապատասխանությունները շտկված են:	Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ տրված պարզաբանումը համարվել է ընդունելի:
«ՀԱԷԿ» ՓԲԸ *«ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ-72/15»*	Հրավերի 1-ին մասի «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերով մասնակիցներին ներկայացվող պահանջները (բացառությամբ 3.3 և 3.6 հավելվածներով ներկայացվող հայտարարությունների), կարծում ենք, չեն համապատասխանում Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներին, քանի որ նշված որակավորման չափանիշների մասով մասնակիցներին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով	Սահմանված կարգով անհամապատասխանությունները շտկված են:	Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ տրված պարզաբանումը համարվել է ընդունելի:

	մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, սահմանվում են, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ:		
ՀՀ Շիրակի մարզի Քեթիի գյուղապետարան *«ՇՄՔԳ-ՊԸԱՊՁԲ-15/1»*	Հրավերի 1-ին մասի՝ • «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերով մասնակիցներին ներկայացվող պահանջները (բացառությամբ 3.3 և 3.6 հավելվածներով ներկայացվող հայտարարությունների), կարծում ենք, չեն համապատասխանում Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներին, քանի որ նշված որակավորման չափանիշների մասով մասնակիցներին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, սահմանվում են, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ, • հայտերի գնահատման, համեմատման և արդյունքների	Սահմանված կարգով անհամապատասխանությունները շտկված են:	Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ տրված պարզաբանումը համարվել է ընդունելի:

	ամփոփման բաժնում ներառվել են 8.1.1-8.1.3 կետերը, որոնք պարունակում են ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամա-պատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու կամ չշտկելու մասին Կարգի համապատասխանաբար՝ 51-րդ և 52-րդ կետերով սահմանված պահանջները, այնինչ Կարգի 50-րդ կետի համաձայն, անհրաժեշտ էր հրավերում ներառել միայն 8.1.4 կետը:		
«Վանաձորի թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ *«Վ25ՀԴ-ՊԸԱՇՁԲ-15/2»*	Հրավերի «Մասնագիտական փորձառություն» և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերում միաժամանակ ներառվել են Կարգի 65-րդ և 67-րդ կետերի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով: Հրավերում չի ներառվել տեղեկատվություն անգործության ժամկետի վերաբերյալ, ինչը չի համապատասխանում Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետին:	Դիտողություններն ընդունվել են և կազմակերպվել է նոր գնման ընթացակարգ:	
Արարատի քաղաքապետարան *«ՀՀ ԱՄԱՔ-ՊԸԱՇՁԲ-15/12»*	Հայտարարությամբ և հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը չի համապատասխանում Կարգի 86-րդ կետով սահմանված պահանջներին: Հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.3 ենթակետի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գնահատման կարգով հստակ չեն	Անհամապատասխանություններն ընդունվել են և հրավերում կատարվել է փոփոխություն:	

	սահմանվել անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին ներկայացվող պահանջները, ինչը չի համապատասխանում Կարգի 68-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներին:		
«Երևանի հ. 35 հիմնական դպրոց» ՊՈԱԿ *«35ՀԴ-ՊԸԱՇՁԲ-15/1»*	Հայտարարությամբ սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը չի համապատասխանում Կարգի 86-րդ կետով սահմանված պահանջներին: Հրավերի «Մասնագիտական փորձառություն» և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերում միաժամանակ ներառվել են Կարգի 65-րդ և 67-րդ կետերի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով: Հրավերի ծավալաթերթ-նախահաշիվը չի պարունակում աշխատանքների կատարման արժեքները, ինչը չի համապատասխանում Կարգի 37-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին:	Պատվիրատուն պարզաբանում չի ներկայացրել:	
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի գյուղապետարան *«ԿՄՋԳ-ՊԸԾՁԲ-15/3»*	Հրավերը չի պարունակում Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված որակավորման չափանիշը և դրա գնահատմանը վերաբերող Կարգի 66-րդ կետով սահմանված պահանջները:	Անհամապատասխանություններն ընդունվել են և հրավերում կատարվել է փոփոխություն:	
«Վանաձորի Հ.	Հրավերով գնման առարկա է հանդիսանում «պատուհանների փոխման	Պատվիրատուն	

Թումանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ *«ՎՀԴ-ՊԸԱՇՁԲ-15/1»*	աշխատանքների» ձեռքբերումը, մինչդեռ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշների գնահատման կարգով համանման են սահմանվել լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների կատարումը, ինչը չի համապատասխանում Կարգի 69-րդ կետի պահանջներին: Ծավալաթերթ-նախահաշվում ներառված են դռների և տանիքի վերանորոգման աշխատանքներ:	պարզաբանում չի ներկայացրել:	
ՀՀ Շիրակի մարզի Ազատանի գյուղապետարան *«ՇՄԱԳ ՊԸԱՇՁԲ 15/4»*	Հայտարարությամբ և հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը չի համապատասխանում Կարգի 86-րդ կետով սահմանված պահանջներին: Հրավերի. • «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշների գնահատման կարգում միաժամանակ ներառվել են Կարգի 65-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով: • 1-ին մասի 2-րդ կետի 2.3 ենթակետի՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման կարգով պայմանագրի կատարման համար հստակ չեն սահմանվել տեխնիկական միջոցների նկատմամբ ներկայացվող պահանջները, ինչը չի համապատասխանում Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներին: • ծավալաթերթ-նախահաշիվը չի պարունակում աշխատանքների	Անհամապատասխանություններն ընդունվել են և հրավերում կատարվել է փոփոխություն:	

	կատարման արժեքները, ինչը չի համապատասխանում Կարգի 37-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին: • տեխնիկական բնութագրով ներկայացված չեն ձեռքբերվող աշխատանքների վճարման պայմանները, ինչը չի համապատասխանում Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:		
ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի N3 հիմնական դպրոց ՊՈԱԿ *«ՀՀ ՎՀԴ3 ՊԸԱՇՁԲ-15/01»*	Հայտարարությամբ սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը չի համապատասխանում Կարգի 86-րդ կետով սահմանված պահանջներին:	Անհամապատասխանություններն ընդունվել են և հրավերում կատարվել է փոփոխություն:	Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ տրված պարզաբանումը համարվել է ընդունելի:
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքապետարան *«ՀՀ ՍՄԳՔ ՊԸԱՇՁԲ 06/15»*	Հրավերի ծավալաթերթ-նախահաշիվը չի պարունակում աշխատանքների կատարման արժեքները, ինչը չի համապատասխանում Կարգի 37-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին:	Անհամապատասխանություններն ընդունվել են և հրավերում կատարվել է փոփոխություն:	Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ տրված պարզաբանումը համարվել է ընդունելի:
«Հ. Ավետիսյանի անվան հ. 74 հիմնական դպրոց» ՊՈԱԿ *«ՀԴ74-ՊԸԱՇՁԲ-*	Հրավերով աշխատանքների կատարման համար սահմանվել է քաղաքաշինության ոլորտի բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիայի առկայության պահանջ, մինչդեռ Հրավերի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշների գնահատման կարգով համանման են սահմանվել բնակելի, հասարակական, արտադրական,	Անհամապատասխանություններն ընդունվել են և հրավերում կատարվել է փոփոխություն:	Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ տրված պարզաբանումը

01/15»	էներգետիկ և հիդրոտեխնիկական ոլորտների լիցենզիաների շրջանակներում շինարարական աշխատանքների կատարումը, ինչը չի համապատասխանում Կարգի 69-րդ կետով սահմանված պահանջներին:		համարվել է ընդունելի:
ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի գյուղապետարան *«ՀՀ ԳՄԳԳ-ՊԸԱՇՁԲ 15/04»*	Կայքով, հայտարարությամբ և հրավերով սահմանված հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետները չեն համընկնում, ինչը չի համապատասխանում Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին: Հրավերի ծավալաթերթ-նախահաշվում բացակայում են աշխատանքների կատարման արժեքները, ինչը չի համապատասխանում Կարգի 37-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին: Հրավերով սահմանված չեն աշխատանքների ձեռքբերման պայմանները, ինչը չի համապատասխանում Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:	Պատվիրատուն պարզաբանում չի ներկայացրել:	
«Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ *«ԳՄՆԱՊՄԻ-ՇՀԱՊՁԲ-15/8»*	Հրավերի 2-րդ մասի 2.2.2 և 2.2.5 կետերով «Մասնագիտական փորձառություն» և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերում միաժամանակ ներառվել են Կարգի 65-րդ և 67-րդ կետերի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով:	Պատվիրատուն պարզաբանում չի ներկայացրել:	

ՀՀ Շիրակի մարզի Բասեն համայնք *«ՇՄԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/1»*	Հրավերի 1-ին մասում չեն ներառվել Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված որակավորման չափանիշները և դրանց գնահատմանը վերաբերող Կարգի համապատասխանաբար՝ 65-րդ, 66-րդ, 67-րդ և 68-րդ կետերով սահմանված պահանջները:	Պատվիրատուն պարզաբանում չի ներկայացրել:	
ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ *«ԱԲԿ-ՇՀԱՊՁԲ11/16-15»*	Հրավերի՝ • «Մասնագիտական փորձառություն» և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերում միաժամանակ ներառվել են Կարգի 65-րդ և 67-րդ կետերի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով, • 1-ին մասի «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերով մասնակիցներին ներկայացվող պահանջները (բացառությամբ 3.3 և 3.6 հավելվածներով ներկայացվող հայտարարությունների), կարծում ենք, չեն համապատասխանում Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներին, քանի որ նշված որակավորման չափանիշների մասով մասնակիցներին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, սահմանվում են, եթե Հայաստանի Հանրապետության գործող	Սահմանված կարգով անհամապատասխանություններն շտկված են:	Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ տրված պարզաբանումը համարվել է ընդունելի:

	ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ: Գնման առարկայի տեխնիկական բնութագրով՝ • նշված չեն ձեռք բերվող դեղերի պիտանիության ժամկետները, որոնք պետք է առկա լինեն գնորդին հանձնման պահին, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 3-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված պահանջներին, • ներկայացված գնման առարկաները ներառված են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի տարբեր խմբերում: Այնինչ հրավերի տեխնիկական բնութագրով դրանք ընդգրկված են նույն ընթացակարգի շրջանակներում, ինչը կարող է հանգեցնել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանն ու սահմանափակել մասնակիցների մասնակցության իրավունքը: Հրավերով ներկայացված գնման առարկաների բնութագրերը չեն համապատասխանում Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:		

ՀՀ ԱՆ «Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ *«ՀՀԱՆԹԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-2»*	Հրավերի 1-ին մասում չեն ներառվել Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով սահմանված որակավորման չափանիշները և դրանց գնահատմանը վերաբերող Կարգի համապատասխանաբար՝ 65-րդ և 68-րդ կետերի 1-ին ենթակետերով սահմանված պահանջները, մինչդեռ Հրավերի 2-րդ մասով պահանջվել են վերը նշված որակավորման չափանիշին վերաբերող հայտարարությունները: Հրավերով ներկայացված գնման առարկայի բնութագիրը չի համապատասխանում Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին:	Սահմանված կարգով անհամապատասխանություններն շտկված են:	
ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ *«ՀՀԳՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԱՊՁԲ-15/21»*	Հրավերով ներկայացված գնման առարկայի բնութագիրը չի համապատասխանում Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին:	Սահմանված կարգով անհամապատասխանություններն շտկված են:	
««Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խմանքի կենտրոն» ՊՈԱԿ *«ՁՀԱԽՈՒԱԽԿ-*	Հրավերի տեքստում ներկայացված պահանջները հիմնականում չեն համապատասխանում Կարգով սահմանված պահանջներին:	«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խմանքի կենտրոն»» ՊՈԱԿ-ի պարզաբանման համաձայն Կենտրոնի կողմից ներկայացված	Ուսումնասիրելով «ՁՀԱԽՈՒԱԽԿ-ՇՀԱՊՁԲ-15/10» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերը՝ պարզ է դարձել, որ

ՇՀԱՊՁԲ-15/10»		անհամապատասխանություններն ընդունվել և կատարվել է փոփոխություն:	արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել: Պատվիրատուի կողմից ներկայացված պարզաբանումը ընդունելի չէ, քանի որ փոփոխված հրավերով չեն պահպանվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները:
ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ *«ՄԿԻ-ՇՀԱՊՁԲ-15/15-15/7»*	Հրավերի. • «Մասնագիտական փորձառություն» և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման կարգերում միաժամանակ ներառվել են Կարգի 65-րդ և 67-րդ կետերի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները, այն դեպքում, երբ անհրաժեշտ է կոնկրետ դեպքի մասնավորեցում՝ մասնակցին ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով, • «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշների գնահատման համար մասնակիցներին ներկայացվող պահանջները (բացառությամբ Կարգի 66-րդ կետի 1-ին ենթակետով պահանջվող հայտարարության), ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը,	Պատվիրատուն պարզաբանում չի ներկայացրել:	

	սահմանվում են, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ (Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերություն): Հրավերը չի պարունակում. • Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանված որակավորման չափանիշը և դրա գնահատմանը վերաբերող Կարգի 68-րդ կետով սահմանված պահանջները, • ձեռքբերվող աշխատանքների վճարման պայմանները, ինչը չի համապատասխանում Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:		
«N 160 հիմնական դպրոց» ՊՈԱԿ *«ՀԴ160-ՊԸԱՇՁԲ-15/1»*	դրական		
ՀՀ մշակույթի նախարարության «Հայաստանի Ազգային Պատկերասրահ» ՊՈԱԿ *«ՀԱՊ-ՊԸԾՁԲ-15/1»*	դրական		
ՀՀ Արարատի	դրական		

մարզի Լուսառատ համայնք *«ԱՄԼՀ-ՊԸԱՇՁԲ-15/2»*			
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ *«ՀՊՏՀ-ՇՀԱՊՁԲ-15/3»*	դրական		
ՀՀ բնապահպանության նախարարության «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ *«ՇՀԱՊՁԲ-15/22 (ՁԿՀ-ԱՊՁԲ-15/04)»*	դրական		
ՀՀ առողջապահության նախարարության «Վ.Ա Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	դրական		

«ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-1»			
ՀՀ ՖՆ «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ *«ԳՎԻԿ ՇՀԱՊՁԲ 15-15/22-4»*	դրական		